



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

« 14 » *Տարբեր* 2025թ. *22-d*

ք. Երևան

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՋԵՐՄԱՅԻՆ, ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՋԵՐՄԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով Ջերմային, ֆիզիկաքիմիական չափումների լաբորատորիայի վարիչ Գարիկ Մարտիրոսյանի 2025 թվականի մարտի 13-ի N 183 զեկուցագիրը և ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով, ընկերությունում աշխատանքները կանոնակարգելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության Ջերմային չափումների տրամաչափարկման լաբորատորիայի կողմից իրականացվող ջերմաչափերի տրամաչափարկման միջլաբորատոր համեմատությունների համար հետևյալ սակագները.

- համեմատություն՝ Ջերմային չափումների՝ դիմադրության ջերմաչափի տրամաչափարկման լաբորատորիայում սկզբնական և վերջնական տրամաչափարկումը (3 կետ) – 2 x 12 000 = 24 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

- երեք կետից ավելի յուրաքանչյուր կետի տրամաչափարկումը – 6 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

2. Ստացված տվյալների չափագիտական և վիճակագրական փորձաքննություն: Դրանց արդյունքների հիման վրա եզրակացությունը (ներառյալ սերտիֆիկատի տրամադրում) – 26 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱՐԱՅԱՆ